ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան
համայնք, Լ. Նավասարդյան 19/1, Հեռ. 095 702854 ,
shahumyan.armavir @mta.gov.am

N 33
02 մայիս 2019թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Կազմ. Առաջատար մասնագետ,գլուխպահ.՝ Ա. Գրիգորյան

Մուտք թիվ 1-08793-2019
07 05 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2019թվականի N 20-Ա

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N52-Ն որոշման 7-րդ կետը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսերի նախահաշիվների մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1/ 01 բաժին 1 խումբ 1 դաս /օրենսդիր և գործադիր մարմիններ/ ծրագրի 4212/ էներգետիկ ծառայություններ/ հոդվածի հուլիս ամսվա ժամանակացույցով նախատեսված 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը տեղափոխել ապրիլ ամիս,

2/ 01 բաժին 6 խումբ 1դաս/ընդհանուր բնույթի հանրային ծառայություն /ծրագրի 4237/ներկայացուցչային ծախսեր/ հոդվածի հուլիս ամսվա 1935000/մեկ միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամը տեղափոխել ապրիլ ամիս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2019թ. ապրիլի 8
գ. Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության՝ Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854 shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2019թվականի N 21-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հնարապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 25-ի N06-Ա որոշումը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի բնակիչ Արմեն Արշակի Հունանյանին հորաքրոջ ՝ Աղունիկ Արտաշեսի Հունանյանի /մահացած՝ 01.04.2019թ./ մահվան կապակցությամբ համայնքի բյուջեից տրամադրել դրամական օգնություն 80000/ութսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ԵՆԱՎԱՍԱՐԳՅԱՆ

2019թ.ապրիլի 12
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854,shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2019թվականի N 22-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 արտահերթ նիստի թիվ 2 որոշումը և Աիդա Ջանիկի Սարգսյանի դիմումը, *որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան գյուղում գտնվող, Աիդա Ջանիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր՝ 04-077-008-010/ տնամերձ հողամասին և նրա վրա առկա շինությանը տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, գ. Շահումյան Մ.Պողոսյան փող., թիվ 19:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

2019 թ. ապրիլի 23
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2019թվականի N 23-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. <<ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, *որոշում եմ՝*

1.Արմավիրի մարզի Շահումյան գյուղում գտնվող, 04-077-0030-0007 և 04-077-0030-0008 ծածկագրերով հողամասերը միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ Շահումյան, Աբովյան փողոց թիվ 12, 14:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2019 թ. ապրիլի 29
գ.Շահումյան